

ՎԱՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուսուաց ազգին աձումը :

Ուսուաստանի ժողովրդեան աձումը, և իրենց կենաց երկայնութեան չափը՝ կարգէ դուրս բան մըն է : 1853 տարւոյն 67,000,000 ժողովրդեան մէջ՝ 2,782,636 ծնունդ եղեր է . իսկ 1,650, 132 մահ, որոնցմէ 26,200 հոգի 50 տարուշնէ վար մեռեր են, 2,181 հոգի ալ 90 տարին անցած, 130 հոգի 100 տարեկան, եօթը հոգի՝ 125-130 տարուան, իսկ ուրիշ մէկ մըն ալ 145 տարուան :

Հաւատալի բան մըն է Ուսուխոյ կանանց բազմածնութիւնն ալ : Ո՞սկուայի օրագիր մը կը պատմէ որ 1755 տարւոյն մարտի 21<sup>ն</sup> Քիրիլով անունով գեղացի մը ներկայացեր է Ուսուաց կայսրուհւոյն առջեւ իր կնկանը հետ մէկտեղ, որուն հետ կարգուեր է եղեր երկրորդ անգամ՝ 70 տարուան հասակին մէջ : Այս մարդս իր առջև կնկանէն 57 զաւակ ունեցեր է, չորս անգամ չորս չորս զաւակ մէկտեղ, եօթը անգամ ալ՝ իրեք իրեք, իսկ վեց անգամ ալ՝ երկուորեակ : Եցրկրորդ կնկանէն եօթը անգամ տղայ ունեցեր է . մէկ անգամ մը իրեք զաւակ մէկէն, ուրիշ վեց անգամ ալ երկերկու, և ընդ ամէնը 15 զաւակ . և առջիններուն հետ մէկտեղ ունեցեր է 72 տղայ՝ բոլորն ալ ողջ :

Վագր նման ալ 1854 տարւոյն մարտի 1<sup>ի</sup> Կասթորովա անունով կնիկ մը հինգ զաւակ մէկտեղ բերեր է, երկուքը մանչ և իրեքը աղջիկ . բայց նոյն օրը հինգն ալ մեռեր են : Ուրիշ կնիկ մըն ալ չորս մանչ զաւակ մէկ անգամուն ծներ է, որոնցմէ մէկը միայն երկրորդ օրը մեռեր է, իսկ մէկանոնք ապրեր են : Ո՞էկ ուրիշ գեղացի մըն ալ 1854<sup>ի</sup> չորս զաւակ մէկէն ունեցեր է, որոնց ամենքն ալ ապրեր են : Այս տարին նոյեմբերի մէջ ազնուական խաթուն մըն ալ չորս զաւակ մէկէն ծներ է : Ա-

սանկ դիպուածներ անպակաս են և կը լուին միշտ Ուսուաց ազգին մէջ :

ՄԱՆՐԱՎԵՊ

Որդիական ակր :

Մտենօք Շաբանի մէջ որբեարի կը նիկ մը կար, որ իրեք տղայ ունէր : Այս կայ իր տղացը աշխատութեր կ'ապրէր . և թէպէտ աղքատօրէն կ'անցընէին կեանքերնին, սակայն վաստըկածնին չեր բաւեր իրենց ապրուստին : Ո՞յըը տղացը վրայ կը գուրգուրար, տղաքն ալ իրենց մօրը վրայ . կը փափաքէին կը մտածէին ասոնք որ մայրերնին խալցընէն կարօտութենէն . բայց ձեռքերնին չեր աւելի վաստըկիլը . որշափ որ սրտերնին այս հոգով կը մաշեր, այնչափ իրենց որդիական սէրը օր օրուան վրայ կ'աւելնար : Ա երջապէս օր մը իրենց ծնողասիրութիւնը աւելի զօրաւոր կերպով խօսեցաւ սըրտերնուն մէջ . այս իրեքը ծածուկ խորհուրդ մը ըրին մէջերնին, ու կարգէ դուրս գործողութեան մը ձեռք զարկին : Քիչ ժամանակ առաջ Շաբանի մէջ օրէնք մը ելած էր թէ ։ Այլ որ տէրութեան ձեռքը կը մատնէ գող մը . մեծ գումար մը ստակ վարձք ունի ։ Ուստի ասոնք խօսքերնին իրարու հետ յարմարցուցին, որ մէջերնին մէկը գող ձեացընէն, ու մէկալ երկուքը երթան ամբաստանէն զանիկայ գատաւորին . վիճակ ձգեցին, ու վիճակը պզտիկին վրայ ելաւ : Այսոր ձեռուըները ետեր կապեցին, ու իբրև յանցաւոր մը բռնեցին դատաւորին առջև հանեցին : Դատաւորը սկսաւ քննել զանիկայ . իսկ տղան համարձակ կերպով մը խոստովանեցաւ թէ ։ Կողեմ, ու սա նա գողութիւնը ըրեր եմ ։ Այսին մէկէն բանտ տարին զինքը . ու մէկանոնց ալ վարձքերնին տուին : Այս ասոնք ստակը առածնուն պէս սրտերնին սկսաւ կտրտիլ եղքօրնուն վրայ, և կը մտածէին թէ ինչ ծանր վը տանգի մէջ է . այս մտածութիւններէն

տագնապած՝ ըրին չըրին բանտը մնան, և կարծելով թէ զիրենք տեսնող չըրիյ՝ գրկուեցան անոր հետ ու կու լային սիրոյ արցունքներով, և ձար մը կ'ուզեին գտնել զինքը խալըսելու : Խնչպէս եղաւ՝ պատահմամբ մէկը դըրսէն այս տեսարանը տեսաւ, և գիտնալով որ այն երկուքն էին զյանցաւորը դատաւորին մատնողը, հետաքրքրութիւնը շարժեցաւ բանին ծայրը իմանալու . ուստի անոնք բանտէն որ ելան, ասիկայ առանց տեսնուելու ետենէն գնաց, ինչուան որ անոնք տուն մը տան . հոն դուրսը կեցած՝ մտիկ ըրաւ որ ասոնք կը պատմէին իրենց մօրը ինչ որ ըրին, և մայրերնին ալ սկսաւ լալ ու ողբար, և պատուիրեց անոնց որ առած ստակնին ետ դարձընեն՝ ըսելով թէ “ Ի՞ս աւելի կ'ուզեմ անօթութենէ մեռնիլ, քան թէ որդւոյս կեանքը վըտանգի մէջ դնելով՝ իմ կեանքս պահել ”, : Ի՞անը խմանալին վերջը՝ այս մարդը եկաւ ամէն բան տեղն՝ ի տեղը դատաւորին իմացուց : Դատաւորը զարմացաւ մնաց թէ այսպիսի հրաշալի ծնողասիրութիւն կրնայ արդեօք գըտնուիլ . և մէկէն դիմացը կանչել տալով

յանցաւ որը՝ դարձեալ քննեց զանիկայ, ու ինչուան սպառնացաւ ալ որ եթէ շշմարտութիւնը չխռատովանի՝ սաստիկ պատիժ կը դնէ վրան . բայց պատանին, որուն սրտին մէջ մայրական սէրը առաջն կիրքն էր, անշարժ կեցաւ ամէն կերպ ճարտարութեան դէմու ինչուան վերջը իրը յանցաւոր ամբաստանեց զինքը : Դատաւորը գթութենէն ալ չկրցաւ ինքը զինքը զսպել, վազեց պլուեցաւ տղուն, ու անյագ բերնով անոր դիւցազնական գործքը կը գովկէր . ետքը առաւ տարաւ զանիկայ կայսեր առջեւ : Կայսրն ալ սաստիկ զարմանալով՝ ձեռքը տղուն ուսին վրայ դրաւ ու “ Ո՞վ առաքինի ազայ, ըսաւ, քու գործքդ՝ առաքինութեան սովորական գործքը չէ, բայց առաքինութենէն ծընած ըլլալուն՝ մեծ գովեստից արժանի է . բոլոր աշխարհք այս քու վեհանձնութեանդ վրայ պիտի խօսի . իսկ ես՝ կ'ուզեմ վարձատրել ”, : Ի՞ս ըսելով՝ կանչել տուաւ անոր մայրն ու երկու եղբայրները, առատ թոշակ մը կապեց իրենց և բնակութիւննին արքունեաց մէջ հաստատել տուաւ :

## ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

### ԱՍՏՂԱԲԱԾԽԱԿԱՆ

Այս նախաղդացումը, անորոշ առ բազումն ՚ի հին աստեղաբաշխից, որոշ մեծին քէրէրի մտացը մէջ, թէ Հրատին ու Լուսնթագին պարունակացը մէջ տեղն եղած ընդարձակութիւնը անբնակ պիտի չըլլայ, այլ հարկ է որ հոն ալ երկնային մարմին պարզաի, որ մասնաւոր պատճառներէ անտեսնելի է, անկարծելի կերպով մը ստուգուեցաւ 180 ին առաջին աստեղատպին դիւտովը . զոր գտաւ Բիթացցի : Բայց այս խեղճ Դիմեսրէն այն չափ փոքրամարմին կ'երկար, որ մարդուն հաւատացը չեր դար (թէ այն ընդարձակ ասպարիզին մէջ մինակուկ պարզաի . և իրաւցնէ շատ չանցաւ աստեղաբաշխը ասոր ճամբուն վրայ գարանելով իրեն խորհրդաւոր ընկերներէն երեք հատ ալ դատան : Այս նոր գիւտերով աստեղաբաշխից միաքը հանդարտեցաւ . վասն զի այն ասենները երկնային գաշնակութեանց և յարաբերութեանց

հանձարիմաց բայց միանդամայն մտացածին զինաց զմայլեր էին . և անձշգրիտ ծանօթութիւններով կը կարծեին թէ այն չորս մանր մոլորակները մէկտեղ առնելով՝ կը հաւատարէին ուրիշ միջական մեծութեամբ մոլորակի մը զանգուածոյն, և թէ անոնց միջին հեռաւորութիւնները ամենաին չեն այլայլեր կելսիոսի երկակայած ու անցեալ դարուն վերջերը Պոտէ աստեղաբաշխէն վերանորդած օրէնքը, որով սեպեցին թէ ամէն բան լըմինցաւ . եղան ալ ոմանք որ բախն թէ ասոնք այն մեծ մոլորակին կտորուանքներնը ըլլան, որոնք ուժդին բախմամբ մը մէկմէկէ բաժնուելով՝ իրարումտ բայց իրարմէ անկախ շարունակած ըլլան իրենց անսպառելի զըլանը կատարել արեւուն բուլրակիք : Այսպէս երեսունըութը տարի աստեղաբաշխը այս սխալ վճռոյս ապաւինած՝ անդորդ մնացեր էին . մէյ մ՝ ալ չէնք Աստրէային գիւտովը վերակենցաղեց անոնց մեռեալ ակնկալութիւնները և խրախուսեց զանոնք նորանոր գիւտերու, որով քիչ ժամանակուան մէջ նոյն տե-